Քաղաքը տեսանելի է

Ես **Ալբերտ Հողմրցյան** եմ:
Մանկուց սիրում էի ստեղծել՝ քանդում էի չաշխատող սարքերը ու դետալները իրար միացնելով՝ նոր ձևեր էի հորինում: Ծնողներս նկատեցին այս հետաքրքրությունն ու առաջարկեցին ընդունվել ճարտարապետական համալսարան: Ուսման ընթացքում հասկացա, որ ճարտարապետությունը ինձ համար ավելին է, քան մասնագիտություն դա մտածողության ձև է, որը սովորեցնում է տեսնել ձևերի, ծավալների, նյութերի և միջավայրի կապը: Համալսարանից հետո աշխատելով նախագծման և դիզայնի ոլորտում՝ ավելի հստակ հասկացա, որ ինձ համար կարևոր է ոչ միայն գաղափարներ ստեղծելը, այլև նյութի հետ անմիջական աշխատելը և այդ գաղափարները իրական ձևի բերել սեփական ձեռքերով: Այդ հետաքրքրությունն ինձ բերեց դեպի ձեռքի աշխատանք և հատկապես քարագործություն, որտեղ նյութը դառնում է ոչ միայն կառուցման միջոց, այլ նաև արտահայտման լեզու:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Է Կոլեկտիվը համարձակ, բազմաոլորտ ստեղծագործական էկոհամակարգ է, որը վերջին մեկ տարվա ընթացքում գործում է որպես հասարակական կազմակերպություն:

Է կոլեկտիվը համադրում է գիտական հետազոտությունն ու ավանդություններից ժառանգած գիտելիքը՝ ստեղծելով փորձարարական արվեստի գործեր և փորձառություններ, որոնք վերաիմաստավորում են արվեստի, գիտության և բնության միջև ընդունված սահմանները:

Է Կոլեկտիվի շրջանակում յուրաքանչյուր անդամ կարող է առաջարկել սեփական գաղափարը կամ նախագիծը, որի իրականացմանը կարող են միանալ կոլեկտիվի այլ անդամներ և կամավորներ՝ ըստ իրենց հետաքրքրությունների և հմտությունների:

Այս համագործակցային համակարգը թույլ է տալիս անհատական գաղափարները զարգացնել ավելի լայն մասշտաբով անդամները միմյանց աջակցում են, կիսվում գիտելիքով և փորձով, տալիս հետադարձ կապ և միասին լուծում նախագծի ընթացքում առաջացող խնդիրները:

Տուֆիտին Ալբերտի նախաձեռնած նախագիծն է, որը զարգանում է Է Կոլեկտիվի շրջանակում: Նախագծի հետագա փուլերում Է Կոլեկտիվը ևս ներգրավվելու է դրա զարգացմանն ու իրականացմանը՝ միավորելով տարբեր անդամների և կամավորների գիտելիքը, հմտություններն ու ռեսուրսները:

Այս համագործակցության միջոցով Տուֆիտին դառնում է ոչ միայն անհատական ստեղծագործական նախագիծ, այլև կոլեկտիվ փորձարկման հարթակ, որտեղ հայկական ճարտարապետական միջավայրի համար կարևոր նյութը՝ տուֆը, դիտարկվում է նոր տեսանկյունից՝ միավորելով նյութի հետ աշխատանքը, վերօգտագործումը, մշակութային ժառանգությունը և ժամանակակից ստեղծագործական մոտեցումները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՄԱՔՈՒՐ ԵՐԵՎԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ՏՈՒՖԻՏԻ

ՏՈՒՖԻ ՓԱՓԱՐՈՍԱԼԵՐԻՑ՝ ԱՌԿԵՍ

E:COLLECTIVE







ՏՈՒՖԻՏԻ

ՏՈՒՖԵ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ՝ ԱՐՎԵՍՏ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱԼԲԵՐՏ ՀՈՂՄՐՑՅԱՆ

Է Կոլեկտիվ էկոլոգիական ԵՎ Մշակութային Հասարակական Կազմակերպություն

Նախաբան

Հայկական տուֆը՝ ազգային արժեք

Հայ ժողովրդի բանահյուսությունն ու պատմությունը վկայում են, որ հայերն արարող և ստեղծող են: Իզուր չէ հայերի մասին ասվում՝ «Քարից հաց քամող»: Հնուց ի վեր հայերը, որտեղ ոտք են դրել, այնտեղ պատ են շարել, տուն կառուցել: Նույնիսկ բարձր լեռներն ու ժայռերը չեն խանգարել հայերին ամուր բերդեր և ամրոցներ կառուցել:

Դարեր առաջ արդեն հայերը համոզվել էին, որ տուֆն ավելի ամուր քարատեսակ է, քան աղյուսը: Ավելի ուշ արդեն պարզ դարձավ, որ այս քարատեսակը նաև միատարր է և նրանից հնարավոր է հարթ և հավասար ուղղանկյուն կտորներ ստանալ: Տուֆը կտրելու համար անհրաժեշտ չէին մեքենաներ և ժամանակակից սարքավորումներ: Միայն կացինը և սղոցը բավարար էին, որպեսզի ստանային հավասար քարի կտորներ:

Արևի քաղաքը

Երևանի ճարտարապետության գլխավոր առանձնահատկությունը տուֆն է: Հենց իր վարդագույն համայնապատկերի համար էլ Երևանը կոչվել է վարդագույն քաղաք: Քաղաքն իր ամենավառ գունավորումը ստանում է արևաածագի և արևամուտի ժամերին և օրվա ընթացքում փոխում է իր գույնը՝ կախված թե որտեղ է գտնվում արևը: Սա էլ հենց Թամանյանի երազանքն էր՝ կառուցել արևի քաղաք:

Դեռ դարեր առաջ Արգիշտի արքան հրամայել էր Էրեբունի մայրաքաղաքը կառուցել սև տուֆից, քանի որ սև տուֆի հանքը գտնվում էր հենց կառուցվող քաղաքում: Էրեբունի մայրաքաղաքից մինչև Երևան՝ տուֆը չի փոփոխվել և չի կորցրել իր արժեքը: Եվ դարեր անց Թամանյանը, հետևելով հայկական ճարտարապետության ավանդույթներին, որոշեց, որ Հայաստանի նոր մայրաքաղաքը պետք է կառուցվի վարդագույն և սև տուֆից:

Քարե մոզաիկա և տուֆային ֆասադներ հայկական ճարտարապետության մեջ

Հայաստանում, հատկապես Երևանում, XX դարի երկրորդ կեսին լայնորեն տարածվեց շենքերի արտաքին պատերը զարդարելու ձև, որտեղ օգտագործվում էին տուֆի տարբեր գույների փոքր քարեր կամ մոզաիկա կոմպոզիցիաներ: 1960-1980-ականներին ճարտարապետության մեջ ընդունված էր, որ շենքերը չլինեն միայն ֆունկցիոնալ, այլ նաև ունենան արվեստային ձևավորում: Պետական կանոններով շինարարական բյուջեի մոտ 2-5%-ը պարտադիր հատկացվում էր դեկորատիվ արվեստին՝ մոզաիկաների, ռելիեֆների կամ գունավոր քարե ձևավորումների համար:



Քարե խճանկարային ֆասադների հիմնական նպատակներն էին՝

1. մոնոտոն, պանելային շենքերն ավելի գեղեցիկ դարձնել,

2. ստեղծել ազգային ոճ սովետական ճարտարապետության մեջ

3. օգտագործել տեղական քարերը և արհեստավորների աշխատանքը:

Լուծում

Երևանի շինարարական թափոնները

Այս մոտեցումը թույլ է տալիս շինարարական թափոնը վերածել օգտակար և երկարաժամկետ նյութի՝ միաժամանակ ձևավորելով նոր տեսակի դիզայն, որտեղ համադրվում են բնական քարը, ժամանակակից տեխնոլոգիան և ձեռքի աշխատանքը: Յուրաքանչյուր պանել դառնում է ոչ միայն նյութական օբյեկտ, այլ նաև պատմություն կրող միավոր՝ արտացոլելով վերաօգտագործման գաղափարը և հայկական քարագործության շարունակականությունը:
Հետագայում հնարավոր է զարգացնել այս համակարգը՝ ստեղծելով տարբեր չափերի և ձևերի մոդուլներ, որոնք կարող են հեշտությամբ համադրվել միմյանց հետ՝ ձևավորելով մեծ մակերեսներ կամ բարդ կոմպոզիցիաներ:

Այսպիսով, պանելները կարող են վերածվել ճարտարապետական ամբողջական լեզվի՝ կիրառելի թե՛ փոքր օբյեկտներում, թե՛ ամբողջական ֆասադների ձևավորման մեջ:

Առաջարկ

Այս փոքրաչափ պանելները պատրաստված են տուֆե ջարդոններից: Փայտից պատրաստված կաղապարի մեջ նախապես տեղադրվում են ձևավորված և կտրված տուֆի կտորները, այնուհետև ամբողջ կառուցվածքը լցվում է թանձր բետոնով: Չորանալուց հետո պանելն առանձնացվում է կաղապարից և ենթարկվում է մակերեսային մշակման՝ հղկման կամ շուշաթղթման, որպեսզի բացահայտվի քարի բնական գույնն ու կառուցվածքը:

Արդյունքում ստացվում են ամուր և գեղագիտական առումով արտահայտիչ մակերեսներ, որտեղ յուրաքանչյուր պանել ունի իր յուրահատուկ պատկերն ու կառուցվածքը՝ պայմանավորված օգտագործված տուֆի կտորների ձևով և գույնով:

Այսպիսի պանելները կարող են կիրառվել որպես դեկորատիվ տարր՝
1. բնակելի ինտերիերում
2. շենքերի էքստերիերում
3. հասարակական տարածքներում (սրճարաններ, բակեր, մշակութային կենտրոններ):

Բացի դեկորատիվ նշանակությունից, պանելները կարող են ունենալ նաև ֆունկցիոնալ կիրառություն: Նույն չափսերի մոդուլային պանելները իրար միացնելով հնարավոր է ստեղծել տարբեր կառուցվածքներ, օրինակ՝ ծաղկամաններ, փոքր ճարտարապետական ձևեր, նստարանների հիմքեր կամ նույնիսկ տարածք բաժանող պատնեշներ:

Հին ավանդույթը՝ նորովի



Հայկական մշակույթում տուֆը ոչ միայն շինանյութ է եղել, այլ նաև արվեստի կրող: Հին Հայաստանում տուֆից կառուցված տների, եկեղեցիների և խաչքարերի մակերեսները երբեմն ստանում էին գունային ընդգծումներ, քարի վրա կիրառվում էին բնական ներկեր, որոնցից ամենահայտնին որդան կարմիրն էր:

Նոր սերնդի տուֆաբետոնային պանելների ստեղծման գաղափարը կարող է շարունակել ոչ միայն քարի օգտագործման ավանդույթը, այլ նաև այդ գունային մշակույթը: Տուֆի բազմագույն մակերեսների վրա որդան կարմիրով կատարված գծանկարները կամ նշանները կարող են ստեղծել ժամանակակից, բայց միևնույն ժամանակ խորապես հայկական գեղարվեստական լեզու: Այդ մոտեցումը կդարձնի պանելները ոչ միայն շինարարական տարր, այլ նաև մշակութային շերտ կրող մակերես:

Այսպիսով, նոր պանելների վրա որդան կարմիրի երանգով նկարելը կարող է դիտարկվել որպես հին ավանդույթների շարունակություն՝ որտեղ հայկական քարը, բնական ներկը և ժամանակակից քաղաքային արվեստը միավորվում են մեկ ամբողջական գաղափարի մեջ: Քարի մակերեսը դառնում է հիշողության և շարունակականության տեղ, որտեղ անցյալի նյութերը և տեխնիկաները վերածվում են նոր քաղաքային արտահայտման ձևի:

Ազդեցություն

Մենք ցանկանում ենք վերադարձնել և վերաիմաստավորել տուֆաբետոնային պանելների և ֆասադների պատրաստման ավանդույթը: Խորհրդային տարիներին այս պանելները ոչ միայն շարունակել են հայկական տուֆի օգտագործման մշակույթը, այլև ծառայել են որպես տուֆե արտադրության թափոնների արդյունավետ կիրառման միջոց՝ ստեղծելով գեղարվեստական արժեք ունեցող խճանկարային մակերեսներ:

Այսօր, ակտիվ շինարարության պայմաններում, մեծ քանակությամբ տուֆային թափոններ կուտակվում են և աղտոտում քաղաքային միջավայրը: Միևնույն ժամանակ տուֆը ունի գունային հարուստ բազմազանություն, որը մեծ հնարավորություններ է տալիս դեկորատիվ լուծումների համար:

Մենք առաջարկում ենք այդ թափոնները վերածել նոր սերնդի տուֆաբետոնային պանելների՝ համատեղելով ավանդական նյութը և ժամանակակից դիզայնը: Այս մոտեցումը թույլ է տալիս միաժամանակ լուծել էկոլոգիական խնդիր և ստեղծել նոր գեղարվեստական լեզու քաղաքային միջավայրում՝ շարունակելով հայկական քարագործության ավանդույթը: